Անուշիրվան ապա գրեց Թըքայ՝ թագաւորին բարեկամութեան եւ խաղաղութեան թուղթ, ասելով որ երկուսի շահերը ընդհանուր են եւ խնդրելով նորա դստեր ձեռքը ի նշան մտերմութեան. առհասարակ սաստիկ ցանկութիւն յայտնեց նորա հետ ազգականանալ. նա իւր կողմից ուղարկեց Թուրքի մօտ իւր սարկուհին, որին նա իւր դուստրն էր անուանում եւ որին որդեգրած էր նորա կանանցից մէկը. Թուրքը եւս իւր դուստրը բերեց Անուշիրվանի մօտ, որ նորան ընդ առաջ էր եկած։ Երկուսի պատահումը տեղի ունեցաւ Բարշալիյում,[2] որտեղ մի քանի օր խնջոյք արին. մէկը միւսի հետ մտերմացաւ եւ ընկերացաւ։ Անուշիրվան հրամայեց իւր մեծամեծներին եւ հաւատարիմներին գիշերը յարձակուել Թուրքայ բանակի վերայ նորա մի ծայրից եւ այրել. նորա հրամանը կատարեցին։ Առաւօտեան Թուրքը գանգատեց դէպքի մասին Անուշիրվանին, որ պատասխանեց, թէ ոչ նա է

---

1 Հարկաւ Խազարաց մասին է խօսքը, որոնք հնուց ի վեր չարունակ կը սպառնային Պարսից հիւսիսային սահմաններին. ներկայ աւանդութիւնս, նկարագրելով Դերբենդի Պահակի շինութիւնն, մանաւանդ կը շեշտէ նորա պատմական կարեւորութիւնն, որով միանգամայն արժանահաւատ կը հանդիսանայ, ի բաց թողնելով հարկաւ ինչ ինչ բանաստեղծական մանրամասնութիւններ։ Խազարաց դռան շինութիւնից յետոյ Պարսից թագաւորները ստիպուած էին այստեղ մեծ գումար պահապան զօրք պահել՝ Կովկասեան ցեղերի արշաւանաց դիմադրելու համար. այսպէս, 466թ. Սարագուրք (Σαράγουροι)՝ գտնելով Ճորայ Պահակը (Ἰουροειπαάχ) ամուր պաշտպանուած, յետ դարձան եւ Ալանաց դռնով մտան Հայաստան (Prisk. fr. 37)։ Քանի դեռ Յունաց ազդեցութիւնն զօրեղ էր Փոքր Ասիայում, նոցա վերայ էր ծանրացած Դռան վերայ հսկելու հոգսը, դրամով կամ զինուորներով։

2 بَرْشَلِيَّة. Jakut կը կարծէ Աղուանից երկրում. Պարսից ոչ հեռի։